ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

2025
ԵՐԵՎԱՆ

Սույն ուղեցույցը մշակվել և հրապարակվել է Ընտրական համակարգերի միջազգային հաստատության (IFES) կողմից իրականացվող՝ Միացյալ Թագավորության (ՄԹ) կառավարության՝ ՄԹ զարգացման աջակցությամբ ֆինանսավորվող «Աջակցություն ժողովրդավարության կայացմանը Հայաստանում» (ԱԺԿՀ) ու Շվեդիայի կառավարության կողմից ֆինանսավորվող «Ժողովրդավարությունը և ընտրական բարեվարքությունը Հայաստանում» ծրագրերի շրջանակում: Ուղեցույցի մշակման աշխատանքները համակարգվել են Արդարադատության նախարարության և Վարչապետի աշխատակազմի կողմից:

Սույն տպագրության մեջ ներկայացված բովանդակությունը որևէ կերպ չի ներկայացնում Միացյալ Թագավորության կառավարության, Շվեդիայի կառավարության և Ընտրական համակարգերի միջազգային հաստատության (IFES) պաշտոնական տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5

Ի՞նչ է վարչական ռեսուրսը 7

Վարչական ռեսուրսի չարաշահման արգելքը.
ՀՀ օրենսդրություն 8

Ու՞մ է արգելվում նախընտրական քարոզչության
կազմակերպումն ու իրականացումն իր լիազորություններն
իրականացնելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս 14

Ինչպե՞ս կարող են հանրային ծառայողները մասնակցել
նախընտրական քարոզչությանը 17

Ու՞մ է արգելվում նախընտրական քարոզչության կազմակերպումն
ու իրականացումը իր աշխատանքային պարտականությունները
կատարելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս 18

Ի՞նչ կարգավիճակ ունեցող անձանց է ընդհանրապես արգելվում
նախընտրական քարոզչության կազմակերպումն ու
իրականացումը 19

Ու՞մ չի արգելվում քարոզչություն կատարելը կամ
քարոզչական նյութ տարածելը 20

Նախընտրական քարոզչության իրականացումը հանրային
ծառայության մեջ գտնվող թեկնածուների կողմից 20

Ովքե՞ր են ազատվում իրենց ծառայողական
պարտականություններից, եթե առաջադրվում են
որպես պատգամավորի թեկնածու 21

Ովքե՞ր են ազատվում իրենց ծառայողական
պարտականություններից, եթե առաջադրվում են որպես համայնքի
ավագանու անդամի թեկնածու (համամասնական ընտրակարգով) 22

Վարչական ռեսուրսի օգտագործմանն առնչվող
վարքագծի կանոններ 23

Իրավական պատասխանատվության միջոցներ 27

Վարչական ռեսուրսի չարաշահման արգելքը.
միջազգային չափանիշներ 29

Վարչական ռեսուրսի չարաշահման օրինակներ՝
ըստ միջազգային դիտորդական առաքելությունների զեկույցների..... 34

Կուսակցությունների ֆինանսավորման համակարգը ՀՀ-ում..... 37

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վարչական ռեսուրսի չարաշահմանն առնչվող խնդիրները հետևողականորեն արձանագրվել են տարբեր պետությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի դիտորդական զեկույցներով: Ըստ ԵԽ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի՝ վարչական ռեսուրսի չարաշահումը ներկայումս պարբերաբար հանդիպող լրջագույն մարտահրավերներից մեկն է, ինչպես Եվրոպայում, այնպես էլ դրա սահմաններից դուրս[1]:

Կարևոր է արձանագրել, որ ընտրական գործընթացներում վարչական ռեսուրսի չարաշահման արգելքն առաջին հերթին բխում է մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերից, որոնք ենթադրում են ընտրողների կամքի ազատ արտահայտման ապահովման, ընտրություններին մասնակցող կուսակցությունների և թեկնածուների հնարավորությունների հավասարության ապահովման պարտավորություններ:

Միջազգային պայմանագրերով սահմանված դրույթները ժամանակի ընթացքում մեկնաբանվել են տարբեր միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների կողմից և հիմք են դարձել վարչական ռեսուրսի չարաշահման կանխարգելման բնագավառում առավել մանրամասն չափորոշիչների և սկզբունքների մշակման համար:

Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդաժողովի՝ 1990 թվականի Կոպենհագենի հանդիպման փաստաթուղթը սահմանում է պետության և քաղաքական կուսակցությունների միջև հստակ տարանջատման անհրաժեշտությունը, ինչպես նաև քաղաքական կուսակցություններին անհրաժեշտ իրավական երաշխիքներով ապահովելու պահանջը, որոնք հնարավորություն կընձեռեն մրցակցելու միմյանց հետ օրենքի առջև հավասարության և իշխանությունների կողմից հավասար վերաբերմունքի սկզբունքների հիման վրա[2]:

Վենետիկի հանձնաժողովի «ընտրական» հարցերում բարենպաստ գործելակերպի կանոնագրքի համաձայն՝ կուսակցությունների և թեկնածուների համար պետք է ապահովվի հավասար հնարավորություն-

[1] Տե՛ս, Preventing and responding to the misuse of administrative resources during electoral processes, Joint Guidelines by the European Commission for Democracy through Law (Venice Commission) and the OSCE Office for Democratic Institutions and Human Rights.

[2] Տե՛ս, Document of the Copenhagen Meeting of the Conference on the Human Dimension of the CSCE, 29 June 1990.

ների երաշխիք, ինչը ենթադրում է իշխանությունների չեզոք վարքագիծ հանրային ֆինանսավորման, նախընտրական քարոզարշավի, ինչպես նաև դրա լուսաբանման կապակցությամբ՝ հատկապես հանրային լրատվամիջոցների կողմից[3]:

Ընտրական գործընթացներում վարչական ռեսուրսի չարաշահման կանխարգելմանն ուղղված առանցքային հիմնադրույթներ և չափանիշներ են սահմանված Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի 2016 թվականին ընդունված համատեղ Ուղեցույցով[4], որը նախատեսում է վարչական ռեսուրսի չարաշահման կանխարգելման նպատակին հասնելու համար անհրաժեշտ կառուցակարգերը:

Թեև վարչական ռեսուրսի իրավաչափ և ոչ իրավաչափ օգտագործման միջև հստակ սահմանագիծ անցկացնելը երբեմն կարող է դժվար թվալ, հանրային ծառայության մեջ գտնվող անձանց համար չափազանց կարևոր է գործել առավելագույն զգոնությամբ և պատասխանատվության գիտակցմամբ՝ խուսափելով պետության և քաղաքական կուսակցության սահմանազատման սկզբունքի խաթարումից: Վարչական ռեսուրսների չարաշահման արգելքի ապահովումը պետք է դիտարկվի ոչ միայն որպես օրենսդրական պահանջ, այլև՝ պատասխանատու և հաշվետու կառավարման մշակույթի առանցքային բաղադրիչ, որը պետք է ծառայի ժողովրդավարության, իրավունքի գերակայության և ընտրությունների նկատմամբ հանրային վստահության ամրապնդմանը:

Սույն ուղեցույցը նպատակ ունի ներկայացնել վարչական ռեսուրսի չարաշահման հիմնական դրսևորումները, առկա օրենսդրական կարգավորումները, միջազգային չափանիշները, ինչպես նաև վարչական ռեսուրսի չարաշահման, գործնականում հանդիպող, որոշ օրինակներ:

[3] Տե՛ս, Code of good practice in electoral matters, Venice Commission Council of Europe, CDL-AD (2002) 23, 2002.

[4] Preventing and responding to the misuse of administrative resources during electoral processes, Joint Guidelines by the European Commission for Democracy through Law (Venice Commission) and the OSCE Office for Democratic Institutions and Human Rights.

Ի՞ՆՉ Է ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԸ

Միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվող բնորոշման համաձայն՝ վարչական ռեսուրսները մարդկային, ֆինանսական, նյութական, բնեղեն և այլ ոչ նյութական ռեսուրսներն են, որոնց ընտրությունների ժամանակ տիրապետում են հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները՝ պայմանավորված հանրային ոլորտում անձնակազմի, ֆինանսների և հատկացումների նկատմամբ նրանց վերահսկողությամբ, հանրային ենթակառուցվածքների հասանելիությամբ, ինչպես նաև այն ռեսուրսները, որոնք արտահայտվում են նրանց՝ որպես հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների դիրքից բխող հեղինակության կամ հանրային ներկայության ձևով, և որոնք կարող են վերածվել քաղաքական կամ այլ բնույթի աջակցության[5]:

ՀՀ ընտրական օրենսգրքի[6] (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 23-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ վարչական ռեսուրսները **մարդկային, ֆինանսական, նյութական այն միջոցներն են,** որոնց ընտրությունների ժամանակ տիրապետում են հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք՝ պայմանավորված հանրային ոլորտում անձնակազմի, ֆինանսների և հատկացումների նկատմամբ նրանց վերահսկողությամբ:

Վարչական ռեսուրսները ներառում են նաև ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված տեղեկատվական միջոցները, տարածքները, տրանսպորտային ու կապի միջոցները[7]: Հարկ է նկատել, որ Օրենսգրքով սահմանված վարչական ռեսուրսի սահմանումը սպառիչ չէ:

«Հանրային ծառայության մասին» օրենքի[8] 27.1-րդ և 32-րդ հոդվածներով ընդլայնվում է վարչական ռեսուրսի տեսակների շրջանակն այնքանով, որքանով սահմանվում են.

---

[5] Տե՛ս, European Commission for Democracy through Law (Venice Commission), Report on the misuse of administrative resources during electoral processes, 2013:

[6] Տե՛ս, ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքը: Ընդունվել է 25.05.2016թ., ՀՕ-54-Ն:

[7] Տե՛ս նույն տեղում:

[8] Տե՛ս, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը: Ընդունվել է 23.03.2018թ., ՀՕ-206-Ն:

✓ Հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի **պաշտոնեական (ծառայողական) դիրքը, նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական և (կամ) համայնքային այլ գույքը և ծառայողական տեղեկատվությունը:**

✓ Հանրային ծառայողի պաշտոնի հեղինակությունը կուսակցական/նախընտրական քարոզչության նպատակներով օգտագործելու վերաբերյալ սահմանափակումներ:

ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԱՐԳԵԼՔԸ

Վարչական ռեսուրսի չարաշահման արգելքի իրավական հիմքերը ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերում

Ընտրական գործընթացներում վարչական ռեսուրսի չարաշահման արգելքը բխում է ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերից, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայից և ՄԱԿ-ի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրից:

Այս պայմանագրերով անդամ պետությունները, այդ թվում՝ ՀՀ-ը, պարտավորվում են ապահովել ազատ ընտրությունների, հավաքների ազատության, արտահայտվելու ազատության իրավունքները, որոնցից բխում են ընտրություններին մասնակցող կուսակցությունների և թեկնածուների հնարավորությունների հավասարության, խտրականության բացառման, ընտրողների կամքի ազատ արտահայտման ապահովման պահանջները՝ ազատ և արդար ընտրությունների անցկացման նպատակով: Վարչական ռեսուրսի չարաշահումները բացառելու պարտավորությունը, ի թիվս այլնի, բխում է նաև պաշտոնեական դիրքի չարաշահման դեմ երաշխիքներ սահմանող ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայից:

Վարչական ռեսուրսի չարաշահման արգելքն ուղղակիորեն բխում է նաև ՀՀ Սահմանադրությամբ[9] երաշխավորված ընտրական իրավունքի սկզբունքներից, որոնց համաձայն՝ Ազգային ժողովի և համայնք-

[9] Տե՛ս, ՀՀ Սահմանադրություն: Ընդունվել է 06.12.2015թ.:

ների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

Մեկնաբանելով վերոգրյալ սկզբունքները՝ Սահմանադրական դատարանն[10] արձանագրել է, որ վարչական ռեսուրսի չարաշահումներն ընտրական գործընթացներում խաթարում են ժողովրդավարական ընտրությունների անցկացման հիմքերը, քանի որ չեն երաշխավորում՝

- բոլոր թեկնածուների համար հավասար պայմաններ
- հավասար վերաբերմունք տարբեր թեկնածուների նկատմամբ
- ընտրողների կարծիք ձևավորելու ազատությունը
- ընտրական գործընթացում անաչառության սկզբունքի պահպանումը:

ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԱՐԳԵԼՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՀՀ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԵՎ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ

ՀՀ ընտրական օրենսգրքով արգելվում է նախընտրական քարոզչության կազմակերպման և իրականացման ընթացքում վարչական ռեսուրսի օգտագործումն ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու նպատակով:

!

- Վարչական ռեսուրսի օգտագործման արգելքը տարածվում է, այդ թվում՝ ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված՝
  - ֆինանսական միջոցների
  - տեղեկատվական միջոցների
  - տարածքների
  - տրանսպորտային ու կապի միջոցների
  - նյութական և մարդկային ռեսուրսների նկատմամբ:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 32-րդ հոդվածով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին արգելվում է.

[10] Տե՛ս, ՀՀ Սահմանադրական դատարանի 17.07.2021թ. թիվ ՍԴՈ-1606 որոշումը:

✓ Իրենց պաշտոնեական (ծառայողական) դիրքն օգտագործել կուսակցությունների համար փաստացի առավելություններ կամ արտոնություններ ապահովելու համար:

✓ Ոչ ծառայողական, այդ թվում՝ նախընտրական քարոզչության, նպատակներով օգտագործել նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական և (կամ) համայնքային այլ գույքը և ծառայողական տեղեկատվությունը:

«Հանրային ծառայության մասին» օրենքը սահմանում է նաև վարչական ռեսուրսի չարաշահմանն առնչվող հետևյալ իրավակարգավորումները.

✓ Պաշտոն զբաղեցնող անձը պետք է խուսափի շահերի բախման[11] իրավիճակի առաջացումից, ձեռնպահ մնա շահերի բախման իրավիճակում գործողություն (անգործություն) կատարելուց կամ որոշում ընդունելուց, այդ թվում՝ որոշման կայացմանն ուղղված նախապատրաստական աշխատանքներին մասնակցելուց կամ այլ կերպ որոշման կայացման գործընթացին մասնակցելուց:

✓ Հանրային ծառայողները քաղաքական կամ հանրային քննարկումներին, միջոցառումներին, այդ թվում՝ նախընտրական քարոզչությանը մասնակցելիս իրավունք չունեն հանդես գալու ի պաշտոնե կամ նշելու իրենց պաշտոնեական դիրքի, կոչման մասին կամ որևէ կերպ օգտագործելու պաշտոնի հեղինակությունը որևէ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կամ թեկնածուի օգտին[12]:

✓ Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները հանրային ռեսուրսներն օգտագործում են արդյունավետ և խնայողաբար:

✓ Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողներն իրենց լիազորություններն իրականացնելիս դրսևորում են անկողմնակալություն՝ բացառելով որևէ խտրականություն:

[11] Շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերն ազդում են կամ կարող են ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա: Պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահը ներառում է որևէ արտոնություն իրեն կամ իր հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այն անձանց կամ կազմակերպություններին, որոնց հետ ինքը կամ իր հետ փոխկապակցված անձն ունի գործարար, քաղաքական կամ այլ գործնական կամ անձնական հարաբերություններ: Քաղաքական հարաբերությունները ներառում են որևէ կուսակցության մասնակցության կամ տվյալ կուսակցության այլ անդամների հետ ունեցած գործարար կամ այլ գործնական կամ անձնական կապի ուժով ծագող հարաբերությունները (տե՛ս «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածը):

[12] Այս դրույթը չի կիրառվում ընտրություններին որպես թեկնածու հանդես եկող հանրային ծառայողների նկատմամբ (տե՛ս, «Հանրային ծառայության մասին» օրենքի 27.1-ին հոդվածը):

✓ Հանրային ծառայողը՝ ծառայության առանձնահատկություններին համապատասխան, ծառայողական պարտականությունները կատարելիս քաղաքականապես չեզոք է:
✓ Հանրային ծառայողն իր ծառայողական պարտականությունները կատարելիս իրավունք չունի կրելու կուսակցական պատկանելությունը խորհրդանշող նշաններ:

ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Ի թիվս այլ օրինակների՝ վարչական ռեսուրսի չարաշահումը կարող է դրսևորվել հետևյալ կերպ.

- Նախարարի պաշտոնը զբաղեցնող թեկնածուն նախընտրական քարոզչության նպատակով այցելում է մարզեր և համայնքներ՝ օգտագործելով իր ծառայողական մեքենան և վարորդի ծառայությունները կամ համատեղում է պաշտոնական այցերը նախընտրական քարոզչության հետ:

- Մարզպետարանը կազմակերպում է աշխատակազմի տեղափոխումը տրանսպորտային միջոցներով՝ աշխատանքային ժամերին կամ դրանից հետո քաղաքական կուսակցության նախընտրական հանրահավաքին մասնակցելու նպատակով:

- Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի ղեկավարը նախընտրական քարոզչության ժամանակահատվածում օգտագործում է նպաստառուների ցուցակները՝ ընտրողների հետ ուղղակիորեն կապ հաստատելու և նրանցից աջակցություն ակնկալելու նպատակով:

- Նախարարությունը կազմակերպում է վերանորոգված դպրոցի բացման արարողություն, սակայն միջոցառման ընթացքում նախարարն օգտագործում է հարթակը՝ իր կուսակցության կամ իր թեկնածության օգտին քարոզչություն իրականացնելու նպատակով:

- Նախարարության աշխատակիցներին բանավոր կերպով հորդորում կամ հանձնարարում են մասնակցել իշխող կուսակցության նախընտրական հավաքին՝ աշխատանքային ժամերին կամ աշխատանքից հետո: Որոշ դեպքերում՝ չմասնակցելու պարագայում, նրանց ներկայացվում են նաև աշխատանքից ազատման սպառնալիքներ (այս դեպքում որոշ իրավիճակներում առերևույթ առկա է նաև քրեական հանցակազմ պարունակող արարք):

- Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ֆեյսբուքյան պաշտոնական էջում հրապարակվում են քարոզչական բնույթի նյութեր կամ գրառումներ՝ հօգուտ իշխող քաղաքական ուժի կամ ընդդիմադիր քաղաքական ուժի դեմ:

- Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախընտրական շրջանում կազմակերպվում են աննախադեպ, սովորականից մեծ ծավալով մշակութային և զվարճանքի հանրային միջոցառումներ, հաստատվում են սոցիալական ծրագրեր, որոնք ունեն իշխող քաղաքական ուժի օգտին բարենպաստ ընկալում ձևավորելու կամ թաքնված նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակ:

- Ընտրությունների նախաշեմին քաղաքապետարանի բյուջեից ֆինանսավորվող բարեկարգման և կառուցապատման աշխատանքները (ասֆալտապատում, բակերի վերանորոգում և այլն) իրականացվում են աննախադեպ ծավալներով՝ ի տարբերություն տարվա մյուս ժամանակահատվածների՝ հետապնդելով իշխող ուժի օգտին բարենպաստ ընկալում ձևավորելու կամ թաքնված նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակ: Նշված գործընթացներում կարող են ընդգրկվել նաև լրացուցուցիչ ֆինանսական միջոցներ: Այս գործողությունները, որպես կանոն, ուղեկցվում են իշխող քաղաքական ուժի ներկայացուցչի կամ թեկնածուի մասնակցությամբ:

- Թեկնածու հանդիսացող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնատար անձը նախընտրական քարոզչության նպատակով իրականացնում է բակային շրջայցեր և հանդիպումներ բնակիչների հետ, որոնց ընթացքում, համատեղելով թեկնածուի կարգավիճակը և համապատասխան պաշտոնատար անձի պաշտոնը, փորձում է արձանագրել և լուծել բնակիչների կողմից բարձրացված խնդիրները:

- Հանրային հեռուստատեսությունն (այդ թվում՝ դրանով հեռարձակվող հեղինակային հաղորդումների միջոցով) իրականացնում է «թաքնված» քարոզչություն իշխող քաղաքական ուժի օգտին՝ անհամաչափ լուսաբանման, ոչ խտրական պայմանների և անկողմնակալության պահանջների խախտմամբ:

- Նախընտրական քարոզչության նպատակով արձակուրդում գտնվող մարզպետն իրականացնում է գործառույթների մի մասը՝ օգ-

տագործելով իր ազդեցությունն ու դիրքը կուսակցության օգտին առավելություններ ապահովելու նպատակով:

- Կառավարությունը կամ Ազգային ժողովն ընդունում են նորմատիվ իրավական ակտեր, որոնց արդյունքում անհավասար պայմաններ են ստեղծվում ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի համար կամ այլ կերպ խաթարվում է հավասար մրցակցային դաշտը:

- Քաղաքական մրցակցության վրա ազդեցություն գործադրելու նպատակով իրավապահ և/կամ տեսչական մարմինների լիազորությունների օգտագործումը կարող է դիտվել որպես վարչական ռեսուրսի չարաշահում, հատկապես այն դեպքերում, երբ ընտրություններին մոտ ժամանակահատվածում չհիմնավորված կերպով իրականացվում են ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցություններին առնչվող տեսչական ստուգումներ, նախաձեռնվում կամ իրականացվում են չհիմնավորված կամ ընտրողի քրեական հետապնդումներ, ընդդիմադիր թեկնածուների նկատմամբ, արհեստականորեն արագացվում են համապատասխան վարութային գործողությունները կամ տեղի է ունենում համապատասխան անձանց ընտանեկան և անձնական կյանքին առնչվող նախաքննական տվյալների հրապարակում կամ արտահոսք:

Պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ վարչական ռեսուրսի չարաշահման դեպքերը խնդրահարույց են ոչ միայն պաշտոնական նախընտրական քարոզչության ժամանակահատվածում, այլև դրանից դուրս՝ ընտրություններին առավել մոտ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով ընտրական ժամանակահատվածին առնչվող Վենետիկի հանձնաժողովի չափորոշիչները, ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» օրենքի կարգավորումները:

ՈՒ՞Մ Է ԱՐԳԵԼՎՈՒՄ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԻՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՍ ԿԱՄ Ի ՊԱՇՏՈՆԵ ՀԱՆԴԵՍ ԳԱԼԻՍ

Լիազորություններն իրականացնելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս՝ արգելվում է նախընտրական քարոզչության կազմակերպումն ու իրականացնումը.

✓ Հանրային ծառայության մեջ գտնվողներին

✓ Սոցիալական կամ բժշկական կազմակերպությունների աշխատողներին

✓ Ուսումնական հաստատությունների աշխատողներին

✓ Նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողներին:

Բոլոր նշված անձինք իրավունք չունեն կազմակերպելու կամ իրականացնելու նախընտրական քարոզչություն իրենց լիազորություններն իրականացնելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս[13]:

Վարչական ռեսուրսի չարաշահման և նախընտրական քարոզչության կանոնների խախտման օրինակներ

⊗ ***Մարզպետարանում, համայնքապետարանում, նախարարությունում կամ այլ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնում հանրային պաշտոն զբաղեցնող կամ հանրային ծառայության մեջ գտնվող անձն աշխատանքային ժամերին մասնակցում է նախընտրական հավաքին, կամ բաժանում է քարոզչական բնույթի նյութեր, կամ գտնվում է քաղաքական կուսակցության նախընտրական շտաբում՝ չգտնվելով արձակուրդի մեջ:***

⊗ ***Դպրոցի տնօրենը կամ ուսուցիչն իրականացնում է նախընտրական հավաքին աշակերտների կամ նրանց ծնողների մասնակցելու խրախուսմանն ուղղված գործողություններ, հանդես է գալիս համապատասխան հայտարարություններով կամ հորդորներով:***

[13] Տե՛ս, ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենք, 23-րդ հոդվածը: Ընդունվել է 25.05.2016թ.,ՀՕ-54-Ն:

⊗ ***Նախարարը կամ նախարության այլ պաշտոնատար անձը մարզային պաշտոնական այցերի կամ պաշտոնական միջոցառումների ընթացքում քարոզչական բնույթի հայտարարություններ կամ ուղերձներ է հնչեցնում որևէ կուսակցության կամ թեկնածուի օգտին կամ դեմ:***

⊗ ***Բժշկական հաստատության տնօրենը, աշխատակիցների հետ կազմակերպված ժողովի ընթացքում, հորդորում է վերջիններիս քվեարկել որևէ կուսակցության կամ թեկնածուի օգտին, կամ մասնակցել նրանց նախընտրական հավաքին:***

- ***Դատական պրակտիկա***

Փաստեր՝

ՀՀ մարզպետարաններից մեկի աշխատակիցը նախընտրական քարոզարշավի շրջանակներում ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցության կողմից կազմակերպված միջոցառմանը մասնակցելիս, ի պատասխան լրագրողի հարցադրմանը, ներկայանում է որպես «կրթության ոլորտը համակարգող»: Վերջինս ընդունում է, որ աշխատանքային ժամին գտնվում է հավաքի վայրում, ավելին՝ բացահայտ խրախուսում է նաև մանկավարժների ներկայությունը այդ միջոցառմանը: Տեսանյութի հաջորդ դրվագներում հարցազրույցի ընթացքում մանկավարժներն ընդունում են, որ աշխատանքային ժամին գտնվում են քաղաքական կուսակցության կազմակերպած միջոցառմանը: Ընդ որում, նրանցից մեկը մանկապարտեզի աշխատակից է, ով փորձում է իր ներկայությունն արդարացնել երեխաների «ապահով» լինելով, իսկ մյուսը՝ դպրոցի, ով փորձում է իր ներկայությունն արդարացնել միջոցառմանը մասնակցելու նպատակով դասագործընթացը շուտ ավարտելու հանգամանքով:

- ***Դատական ակտ՝***

Աշխատանքային ժամին համապատասխան կուսակցության նախընտրական քարոզչությանը մասնակցելու և մանկավարժների մասնակցությունը խրախուսելու վարքագիծը հանրության կողմից ողջամտորեն կարող է ընկալվել որպես քաղաքական տվյալ ուժի համար ի պաշտոնե իրականացվող քարոզչություն: Իսկ դա ուղղակիորեն արգելված է Ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով:

Միևնույն ժամանակ, աշխատանքային ժամերին մանկավարժների ներկայությունը նախընտրական քարոզարշավին ողջամտորեն կարող է ընկալվել որպես իրենց դիրքի և հեղինակության օգտագործում՝ ի շահ քաղաքական ուժի: «Ի պաշտոնե գործելիս մանկավարժների մասնակցությունը նախընտրական քարոզարշավին նույնպես արգելված է՝ Ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հանդիսանում է վարչական ռեսուրսի չարաշահում» (Վարչական դատարանի թիվ ՎԴ/6999/05/21 վարչական գործով կայացված վճիռ):

ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆԸ

✓ Հանրային ծառայողներն իրավունք ունեն օրենքով սահմանված կարգով մասնակցելու նախընտրական քարոզչությանը՝ պահպանելով քաղաքական զսպվածություն:

✓ Հանրային ծառայողների քաղաքական գործունեությունը չպետք է կասկածի տակ դնի հանրային ծառայության անկողմնակալությունը:

✓ Հանրային ծառայողները քաղաքական կամ հանրային քննարկումներին, միջոցառումներին, այդ թվում՝ նախընտրական քարոզչությանը մասնակցելիս իրավունք չունեն հանդես գալու ի պաշտոնե կամ նշելու իրենց պաշտոնեական դիրքի, կոչման մասին կամ որևէ կերպ օգտագործելու պաշտոնի հեղինակությունը որևէ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կամ թեկնածուի օգտին (բացառությամբ ընտրություններին որպես թեկնածու հանդես եկող հանրային ծառայողների):

✓ Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հանրային ծառայողի՝ որպես պաշտոնատար անձի, մասնակցությունը քաղաքական բնույթի քննարկումներին պետք է կրի բացառապես տեղեկատվական բնույթ և արտահայտի պաշտոնական դիրքորոշումը[14]:

Վարչական ռեսուրսի չարաշահման և նախընտրական քարոզչության կանոնների խախտման օրինակներ՝

- Որևէ նախարարությունում հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձը մասնակցում է հեռուստահաղորդման, նախընտրական բնույթի հանրային քննարկման կամ նախընտրական հանրահավաքի՝ շեշտելով իր պաշտոնը քարոզչական բնույթի հայտարարություններ անելիս կամ դիրքորոշումներ արտահայտելիս:

- Քաղաքապետարանում հանրային ծառայություն իրականացնող անձը, որպես պաշտոնատար անձ, հրավիրվում է մասնակցելու քննարկման, որի ընթացքում վերջինս հանդես է գալիս քարոզչական բնույթի ուղերձներով կամ հայտարարություններով:

[14] Տե՛ս, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, 27.1 հոդվածը: Ընդունվել է 23.03.2018թ., ՀՕ-206-Ն:

ՈՒ՞Մ Է ԱՐԳԵԼՎՈՒՄ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ՝ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԻՍ ԿԱՄ Ի ՊԱՇՏՈՆԵ ՀԱՆԴԵՍ ԳԱԼԻՍ

Աշխատանքային պարտականությունները կատարելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս արգելվում է նախընտրական քարոզչության կազմակերպումն ու իրականացնումը հետևյալ անձանց.

- ✓ Պետական հիմնարկների կամ կազմակերպությունների աշխատակիցներին
- ✓ Համայնքային հիմնարկների կամ կազմակերպությունների աշխատակիցներին
- ✓ Կանոնադրական կապիտալում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների 20 և ավելի տոկոս մասնակցությամբ կազմակերպությունների աշխատակիցներին:

Բոլոր նշված անձինք իրավունք չունեն կազմակերպել կամ իրականացնել նախընտրական քարոզչություն՝ իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս:

Վարչական ռեսուրսի չարաշահման և նախընտրական քարոզչության կանոնների խախտման օրինակներ.

Որևէ ՊՈԱԿ-ի կամ ՀՈԱԿ-ի տնօրենը հորդորում է իր աշխատակիցներին, ինչպես նաև՝ նրանց ընտանիքի անդամներին, մասնակցել քաղաքական կուսակցության կողմից կազմակերպված նախընտրական քարոզչական բնույթ ունեցող միջոցառման:

Համայնքային հիմնարկի ղեկավարը հորդորում է հիմնարկի աշխատակիցներին քվեարկել իշխող քաղաքական ուժի օգտին և ներկայացնել նաև իրենց ընտանիքի անդամների կողմից համապատասխան քվեարկությունը հավաստող ցուցակներ[15]:

[15] Տե՛ս, ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենք, 23-րդ հոդվածը: Ընդունվել է 25.05.2016թ., ՀՕ-54-Ն:

Ի՞ՆՉ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ Է ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ԱՐԳԵԼՎՈՒՄ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Նախընտրական քարոզչության կազմակերպումն ու իրականացնումն ընդհանրապես արգելվում է հետևյալ անձանց.

- Դատավորներին
- Դատախազներին
- Ոստիկանությունում, ազգային անվտանգության ծառայությունում, քրեակատարողական հիմնարկներում, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում, պրոբացիոն ծառայությունում, փրկարար ծառայությունում ծառայողներին, զինծառայողներին, քննչական մարմիններում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննչական մարմինների ղեկավարներ և ղեկավարների տեղակալներ, քննիչներ)

- Ընտրական հանձնաժողովների անդամներին
- Բարեգործական և կրոնական կազմակերպություններին, միջազգային կազմակերպություններին
- Օտարերկրյա քաղաքացիներին և կազմակերպություններին, քաղաքացիություն չունեցող անձանց, բացառությամբ ՏԻՄ ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեցող ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձանց
- Մարդու իրավունքների պաշտպանին
- Կենտրոնական բանկի նախագահին և խորհրդի անդամներին
- Հաշվեքննիչ պալատի անդամներին
- Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներին
- Ինքնավար մարմինների անդամներին
- Բարձրագույն դատական խորհրդի անդամներին
- Հանրապետության նախագահին
- Դիտորդական առաքելություն իրականացնելու համար հավատարմագրված կազմակերպություններին և դիտորդներին:

Բոլոր նշված անձինք առհասարակ իրավունք չունեն կազմակերպել կամ իրականացնել նախընտրական քարոզչություն՝ անկախ պաշտոնական լիազորությունների իրականացման կամ ի պաշտոնե գործելու հանգամանքներից[16]:

Օրինակ՝
Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը նախընտրական քարոզչության ժամանակահատվածում զբաղվում է ակտիվ քարոզչությամբ քաղաքական կուսակցության օգտին, այդ թվում՝ պարբերաբար հրապարակելով քարոզչանյութեր և քարոզչական կոչեր իր անձնական ֆեյսբուքյան էջում:

ՈՒ՞Մ ՉԻ ԱՐԳԵԼՎՈՒՄ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼԸ ԿԱՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՆՅՈՒԹ ՏԱՐԱԾԵԼԸ

Ազգային ժողովի պատգամավորներին, համայնքների ղեկավարներին և ավագանու անդամներին չի արգելվում քարոզչություն կատարելը կամ քարոզչական նյութ տարածելը՝ բացառելով վարչական ռեսուրսների օգտագործումը[17]:



ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Հանրային ծառայության մեջ գտնվող թեկնածուները, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուները նախընտրական քարոզչությունն իրականացնում են **ստորև նշված սահմանափակումների հաշվառմամբ.**

✓ Արգելվում է թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցությանը կողմ կամ դեմ քվեարկելուն ուղղված ուղղակի կամ անուղղակի կոչերը պաշտոնեական լիազորություններն իրականացնելիս:

[16] Տե՛ս, ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենք, 23-րդ հոդվածը: Ընդունվել է 25.05.2016թ., ՀՕ-54-Ն:
[17] Տե՛ս՝ նույն տեղում:

✓ Պաշտոնեական դիրքի ցանկացած չարաշահում՝ ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու համար:

✓ Արգելվում է նախընտրական քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցների, տարածքների, տրանսպորտային և կապի միջոցների, նյութական ու մարդկային ռեսուրսների օգտագործումը՝ բացառությամբ պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների:

✓ Հանրային ծառայության մեջ գտնվող պատգամավորի թեկնածուներն իրավունք չունեն օգտագործելու իրենց պաշտոնեական կամ ծառայողական դիրքի առավելությունները[18]:

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԱԶԱՏՎՈՒՄ ԻՐԵՆՑ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ, ԵԹԵ ԱՌԱՋԱԴՐՎՈՒՄ ԵՆ ՈՐՊԵՍ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ

Հանրային ծառայության մեջ գտնվող պատգամավորի թեկնածուները (բացառությամբ՝ Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի պատգամավորների և Կառավարության անդամների) նախընտրական քարոզչության պաշտոնական մեկնարկի օրվանից մինչև քվեարկության օրն օրենքի ուժով ազատվում են իրենց ծառայողական պարտականությունների կատարումից: Այդ ժամանակահատվածում նշված թեկնածուների բացակայությունն աշխատանքից համարվում է հարգելի՝ առանց վարձատրության պահպանման:

Այսպիսով, պատգամավորի թեկնածու առաջադրվելու դեպքում՝ հանրային ծառայության մեջ գտնվող բոլոր անձինք ազատվում են իրենց ծառայողական պարտականությունների կատարումից, բացառությամբ՝ **Հանրապետության նախագահից, Ազգային ժողովի պատգամավորներից, Կառավարության անդամներից:**

Վերոգրյալ իրավակարգավորումը նշանակում է նաև, որ հանրային ծառայության մեջ գտնվող պատգամավորի թեկնածուները (բացառությամբ սահմանված դեպքերի) նախընտրական քարոզչության ժամանակահատվածում իրավունք չունեն իրականացնելու իրենց պաշ-

[18] Տե՛ս, ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենք, 23-րդ հոդվածը: Ընդունվել է 25.05.2016թ., ՀՕ-54-Ն:

տոնական լիազորությունները: Մասնավորապես, նրանք չեն կարող, որպես պաշտոնատար անձ, մասնակցել պաշտոնական միջոցառումներին կամ կատարել որևէ այլ՝ պաշտոնից բխող գործառույթ[19]:

Օրինակ՝

Որպես պատգամավորի թեկնածու առաջադրված Երևանի վարչական շրջանի ղեկավարը՝ օրենքի ուժով ազատված լինելով իր ծառայողական պարտականությունների կատարումից, նախընտրական քարոզչության ժամանակահատվածում իրականացնում է քաղաքացիների ընդունելություն, փորձում օպերատիվ կարգով լուծել բարձրացված խնդիրները կամ իր պաշտոնի բերումով մասնակցում է վերանորոգված մանկապարտեզի բացման արարողությանը:

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԱԶԱՏՎՈՒՄ ԻՐԵՆՑ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ, ԵԹԵ ԱՌԱՋԱԴՐՎՈՒՄ ԵՆ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒ (ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ)

Համամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի ավագանու անդամի թեկնածու հանդիսացող պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցներն ու պաշտոնատար անձինք (բացառությամբ՝ քաղաքական, վարչական և հայեցողական պաշտոն զբաղեցնողների) **նախընտրական քարոզչության պաշտոնական մեկնարկի օրվանից մինչև քվեարկության օրն օրենքի ուժով ազատվում են իրենց ծառայողական պարտականությունների կատարումից: Այդ ժամանակահատվածում նշված թեկնածուների բացակայությունն աշխատանքից համարվում է հարգելի՝ առանց վարձատրության պահպանման:**

Այսպիսով, համամասնական ընտրակարգով ավագանու անդամի թեկնածու առաջադրվելու դեպքում՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բոլոր աշխատակիցներն ու պաշտոնատար անձինք ազատվում են իրենց ծառայողական պարտականությունների կատարումից, բացառությամբ՝ **քաղաքական, վարչական, հայեցողական պաշտոն զբաղեցնողների:**

[19] Տե՛ս, ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենք, 91-րդ հոդվածը: Ընդունվել է 25.05.2016թ.,ՀՕ-54-Ն:

Վերոգրյալ իրավակարգավորումը նշանակում է նաև, որ հանրային ծառայության մեջ գտնվող համայնքի ավագանու անդամի թեկնածուները (բացառությամբ սահմանված դեպքերի) նախընտրական քարոզչության ժամանակահատվածում իրավունք չունեն իրականացնելու իրենց պաշտոնեական լիազորությունները: Մասնավորապես, նրանք չեն կարող որպես պաշտոնատար անձ մասնակցել պաշտոնական միջոցառումներին կամ կատարել որևէ այլ՝ պաշտոնից բխող գործառույթ[20]:

Օրինակ՝
Որպես համայնքի ավագանու անդամի թեկնածու առաջադրված համայնքային ծառայողը, օրենքի ուժով ազատված լինելով իր ծառայողական պարտականությունների կատարումից, նախընտրական քարոզչության ժամանակահատվածում աջակցում է քաղաքացիներին, համայնքապետարանին ուղղված դրամական օգնություն տրամադրելու դիմումների կազմման հարցում և ընդունում է դրանք:

ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Առանձին հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները՝[21] վարչական ռեսուրսի օգտագործման համատեքստում

Պետական պաշտոն զբաղեցնող անձինք[22], համայնքների ղեկավարները, նրանց տեղակալները, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարները, նրանց տեղակալները **պարտավոր են.**

[20] Տե՛ս, ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենք, 137-րդ հոդվածը: Ընդունվել է 25.05.2016թ., ՀՕ-54-Ն:
[21] Տե՛ս, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 6-ի «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը սահմանելու մասին» թիվ 02-Ն որոշումը:
[22] Բացառությամբ պատգամավորի, դատավորի, բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի:

✓ Հարգել հանրային պաշտոն զբաղեցնող այլ անձանց, հանրային ծառայողների և այլ աշխատողների քաղաքական չեզոքություն և քաղաքական զսպվածություն դրսևորելու օրենսդրական պարտականությունը և չպահանջել նրանցից գործել դրա շրջանակներից դուրս:

✓ Ընտրությունների ժամանակ պահպանել նախընտրական քարոզչության, ներառյալ՝ քաղաքական գովազդին օրենքով ներկայացվող սահմանափակումները և պահանջները, ինչպես նաև չօգտագործել հանրային ռեսուրսները, օրենքով նախատեսված վարչական ռեսուրսներն իրենց, այլ անձանց կամ քաղաքական կուսակցությունների նախընտրական քարոզարշավի համար, չներգրավել այլ հանրային պաշտոն զբաղեցող անձանց, հանրային ծառայողների կամ այլ աշխատողների՝ օգտագործելու իրենց աշխատանքային ժամերը կամ այլ ռեսուրսներն այդ նպատակի համար:

✓ Իրենց պաշտոնեական (ծառայողական) պարտականություններն իրականացնելիս չկատարել կուսակցական շահը սպասարկելու համար հանրային ռեսուրսները տրամադրելու պահանջները, ինչպես նաև՝ նման պահանջներ չներկայացնել հանրային պաշտոն զբաղեցնող այլ անձանց, հանրային ծառայողների կամ այլ աշխատողների:

✓ ՀՀ օրենսդրությամբ քաղաքական զսպվածության պարտավորություն ունեցող հանրային պաշտոն զբաղեցնող անձինք պարտավոր են զերծ մնալ քաղաքական բնույթի հանրային ելույթներ ունենալուց, քաղաքական կողմնորոշում ունեցող հոդվածներ հրապարակելուց կամ սոցիալական մեդիայում ունեցած իրենց օգտահաշվից քաղաքական որևէ կուսակցության օգտին կամ դրա դեմ գրառումներ կատարելուց, նմանատիպ գրառումներ հավանելուց կամ տարածելուց:

✓ Վարքագծի կանոնագրքի իմաստով՝ հանրային ռեսուրսները ծառայողական պարտականությունների իրականացման համար նախատեսված նյութատեխնիկական, ֆինանսական, տեղեկատվական և մարդկային ռեսուրսներն են, աշխատաժամանակը, պետական կամ հանրային սեփականություն հանդիսացող այլ ռեսուրսները:

Քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները[23] վարչական ռեսուրսի օգտագործման համատեքստում

Քաղաքացիական ծառայողը պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն, որը ենթադրում է հետևյալը.

✓Խուսափել հանրային հարթակներում քաղաքական կողմնորոշում ունեցող այնպիսի հոդվածներ, տեսակետներ հրապարակելուց, որոնք կխաթարեն հանրային ծառայության անկողմնակալությունը:

✓Ձեռնպահ մնալ որևէ կուսակցության օգտին կամ դեմ այնպիսի քարոզ իրականացնելուց, որը խաթարում է հանրային իշխանության անաչառությունը և հեղինակությունը:

✓Քաղաքացիական ծառայողը քաղաքական գործունեության ընթացքում պարտավոր է ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են ողջամտորեն կասկածի տակ դնել իր՝ որպես հանրային ծառայողի կամ իր աշխատավայրը հանդիսացող հանրային իշխանության մարմնի կամ առհասարակ հանրային իշխանության անկողմնակալությունը:

✓Քաղաքացիական ծառայողը քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հարաբերություններում, ինչպես նաև մյուս քաղաքացիական ծառայողների հետ հարաբերություններում չպետք է անհարկի նշի որևէ կուսակցությանն իր անդամակցության մասին՝ նպատակ ունենալով ստանալ որևէ անձնական շահ, արտոնություն, առավելություն:

✓Քաղաքացիական ծառայողը պարտավոր է ձեռնպահ մնալ իր պաշտոնեական դիրքն օգտագործելուց որևէ կուսակցության համար արտոնություններ ստանալու նպատակով:

✓Քաղաքացիական ծառայողը պարտավոր է խուսափել ցանկացած հովանավորչությունից:

✓Քաղաքացիական ծառայողը պարտավոր է ձեռնպահ մնալ որևէ առավելություն ստանալուց՝ պայմանավորված իր զբաղեցրած պաշտոնով:

✓Քաղաքացիական ծառայողը պարտավոր է իր աշխատաժամանակը չօգտագործել իր պաշտոնեական լիազորություններից դուրս այլ գործողություններ կատարելու համար, եթե կիրառելի նորմերին համապատասխան այլ բան չի համաձայնեցվել իր վերադասի կամ անմիջա-

[23] Տե՛ս, Հայաստանի Հանրապետության Փոխվարչապետի 2022 թվականի հոկտեմբերի 4-ի «Քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնագիրքը սահմանելու մասին» N 697-Ն որոշումը:

կան ղեկավարի հետ:

✓Քաղաքացիական ծառայողը պարտավոր է ձեռնպահ մնալ ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում ստացված տեղեկատվությունն օգտագործելուց անձնական օգուտ կամ առավելություն ստանալու նպատակով:

✓Քաղաքացիական ծառայողը պարտավոր է արդյունավետորեն և խնայողաբար օգտագործել հանրային ռեսուրսները, այդ թվում՝ ծառայողական գույքը, ինչպես նաև չօգտագործել դրանք սեփական շահերը բավարարելու կամ այլ անձնական նպատակներով:

Պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները գործում են այնքանով, որքանով չեն հակասում ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված՝ թեկնածու հանդիսացող քաղաքացիական ծառայողների կողմից նախընտրական քարոզչության իրականացման վերաբերյալ կարգավորումներին:

Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները[24] վարչական ռեսուրսի օգտագործման համատեքստում

✓Հանրային ծառայողը իր պարտականությունները կատարելիս պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն, այդ թվում՝ հրապարակայնորեն չարտահայտել իր քաղաքական տեսակետները, ձեռնպահ մնալ այնպիսի վարքագիծ դրսևորելուց, որը կարող է քաղաքական գործունեությամբ զբաղվելու տպավորություն ստեղծել:

✓Հանրային ծառայողը իր պարտականությունները կատարելիս պարտավոր է չդրսևորել հովանավորչություն որևէ կուսակցության, քաղաքական կազմակերպության կամ շարժման նկատմամբ, որը, ի թիվս այլնի, ներառում է հանրային իշխանության մարմինների տարածքում և տեղեկատվական նյութերում կուսակցություններին/դաշինքներին կամ թեկնածուներին բնորոշող խորհրդանիշներ կամ անհատականացնող այլ նշաններ ցուցադրելը, ինչպես նաև իր աշխատավայր հանդիսացող հանրային իշխանության մարմնում որևէ թեկնածուի կամ կուսակցության օգտին կամ դեմ քարոզ իրականացնելը:

[24] Տե՛ս, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի «Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները սահմանելու մասին» N 01-Ն որոշումը:

✓Հանրային ծառայողը իր պարտականությունները կատարելիս պարտավոր է չկատարել քաղաքական շահը սպասարկող քայլեր կամ ներգրավվել դրանց պաշտպանության մեջ, չկատարել նման գործունեության համար հանրային միջոցներ տրամադրելու պահանջները, ինչպես նաև նման պահանջներ չներկայացնել այլ հանրային ծառայողների:

✓Հանրային ծառայողը պարտավոր է զերծ մնալ քաղաքական բնույթի հանրային ելույթներ ունենալուց, քաղաքական կողմնորոշում ունեցող հոդվածներ հրապարակելուց կամ սոցիալական էջերում քաղաքական որևէ կուսակցության օգտին կամ դրա դեմ գրառումներ կատարելուց, նմանատիպ գրառումներ հավանելուց կամ տարածելուց:

Պետք է նկատի ունենալ, որ հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոններն անմիջականորեն կիրառելի չեն և հանրային ծառայության յուրաքանչյուր տեսակի պարագայում կիրառելի է այդ տեսակի համար ընդունված վարքագծի կանոնագիրքը, իսկ նման կանոնագրքի բացակայության պարագայում՝ քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնագիրքը:

Համայնքային ծառայողների համար ևս սահմանված են համանման կարգավորումներ համայնքային ծառայողների վարքագծի կանոնագրքի[25] շրջանակներում՝ վարչական ռեսուրսի օգտագործման համատեքստում:

ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

ՀՀ օրենսդրությունն իրավական պատասխանատվության միջոցներ է նախատեսում վարչական ռեսուրսի չարաշահման տարբեր դրսևորումների համար՝ կախված հանրային վտանգավորության աստիճանից: Այսպես՝

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը[26] վարչական պատասխանատվություն է սահմանում.

[25] Տե՛ս, Հայաստանի Հանրապետություն տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի սեպտեմբերի 26-ի «Համայնքային ծառայողների վարքագծի կանոնագիրքը սահմանելու մասին» N 09-Ն հրամանը:

[26] Տե՛ս, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, 40.8-րդ հոդվածը: Ընդունվել է 06.12.1985թ.:

✓Քարոզչության համար օրենքով սահմանված ժամանակահատվածում նախընտրական քարոզչություն իրականացնելու իրավունք չունեցող անձի կողմից նախընտրական քարոզչություն իրականացնելու համար:

✓Նախընտրական քարոզչության նպատակով վարչական ռեսուրսի օգտագործման, ինչպես նաև ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու համար պաշտոնեական դիրքի օգտագործման համար:

ՀՀ քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվություն է սահմանում.

✓Ընտրությանը որևէ ձևով քվեարկելուն, կամ ընտրությանը մասնակցելուն կամ ընտրությանը մասնակցելուց հրաժարվելուն, կամ մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելուն հարկադրելու համար, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով[27]:

✓Նախընտրական քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելու կամ նախընտրական քարոզչություն կատարելուն այլ կերպ խոչընդոտելու համար, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով[28]:

✓Օրինական հավաք անցկացնելուն կամ դրան մասնակցելուն խոչընդոտելու, օրինական կամ անօրինական հավաքին մասնակցելուն հարկադրելու համար անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ շանտաժի միջոցով, ինչպես նաև՝ հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելու համար, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով[29]:

✓Պաշտոնատար անձի կողմից իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն ի վնաս պետական կամ ծառայողական շահերի օգտագործելու կամ իր

[27] Տե՛ս, Քրեական օրենսգիրք, 210-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը: Ընդունվել է 05.05.2021թ., ՀՕ-199-Ն:

[28] Տե՛ս, Քրեական օրենսգիրք, 211-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը: Ընդունվել է 05.05.2021թ., ՀՕ-199-Ն:

[29] Տե՛ս, Քրեական օրենսգիրք, 236-րդ հոդվածի 3-րդ մասը: Ընդունվել է 05.05.2021թ., ՀՕ-199-Ն:

ծառայողական պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ այնպիսի արարք կատարելու համար, որը չի բխում իր լիազորություններից կամ դուրս է իր լիազորությունների շրջանակից, որն էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին[30]:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի պահանջների և վարքագծի կանոնների խախտումներն առաջացնում են կարգապահական պատասխանատվություն՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

Սակայն քաղաքական պաշտոն զբաղեցնող անձինք ենթակա չեն կարգապահական պատասխանատվության և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից խախտման առկայության վերաբերյալ եզրակացություն ընդունելու դեպքում՝ միայն հրապարակային պարզաբանում պետք է ներկայացնեն[31]:

ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԱՐԳԵԼՔԸ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Վարչական ռեսուրսի չարաշահումը սահմանվում է որպես անհիմն առավելություն, որը ձեռք է բերվել որոշակի կուսակցությունների կամ թեկնածուների կողմից իրենց պաշտոնեական դիրքը կամ պետական կառույցների հետ կապերը օգտագործելու միջոցով՝ ընտրությունների արդյունքների վրա ազդելու նպատակով[32]:

Վարչական ռեսուրսի չարաշահումն ընդգրկում է նաև իրավախախտումների տարբեր տեսակները, այդ թվում՝ նրանք, որոնք կապված են պետական մարմինների կողմից հանրային ծառայողների նկատմամբ կիրառվող ճնշումների կամ սպառնալիքի հետ[33]:

---

[30] Տե՛ս, Քրեական օրենսգիրք, 441-րդ հոդվածի 1-ին մասը: Ընդունվել է 05.05.2021թ., ՀՕ-199-Ն:

[31] Տե՛ս, «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 9-րդ մասը: Ընդունվել է 23.03.2025թ., ՀՕ-206-Ն:

[32] Տե՛ս, OSCE/ODIHR Handbook for the Observation of Campaign Finance, 2015.

[33] Տե՛ս, Preventing and responding to the misuse of administrative resources during electoral processes, Joint Guidelines by the European Commission for Democracy through Law (Venice Commission) and the OSCE Office for Democratic Institutions and Human Rights.

Միջազգային ուղենիշային փաստաթղթերից[34] ուղղակիորեն բխում է, որ նյութական, ֆինանսական կամ հանրային ոլորտի մարդկային ռեսուրսները չպետք է չարաշահվեն որևէ քաղաքական կուսակցության կամ թեկնածուի օգտին կամ դեմ:

Այդպիսի ռեսուրսների շարքին կարող են դասվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջետային և ֆինանսական միջոցները, հանրային շենքերն ու տարածքները, հանրային ծառայողները, տրանսպորտային միջոցները, ինչպես նաև այն ֆինանսավորումը, որը տրամադրվում է թեկնածուներին պետական կամ պետական մասնակցությամբ/վերահսկողության տակ գտնվող իրավաբանական անձանց կողմից:

Ուղենիշային փաստաթղթերով նախատեսվում է նաև, որ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում կամ դրանից անմիջապես առաջ պետական մարմինները չպետք է հայտարարեն կամ իրականացնեն բյուջետային ծրագրեր կամ ենթակառուցվածքային նախագծեր, առաջարկեն աշխատատեղեր հանրային ոլորտում, սոցիալական արտոնություններ, աշխատավարձերի կամ կենսաթոշակների բարձրացում՝ հաճախ ոչ հստակ կամ արտոնյալ պայմաններով՝ ընտրողներին գրավելու նպատակով:

Այս երևույթը բացառելու նպատակով օրենսդրությամբ պետք է հստակ սահմանվի, որ հանրային ծառայողները չեն կարող ներգրավվել նախընտրական քարոզարշավում՝ իրենց պաշտոնեական կարգավիճակով, և կարող են այդպիսի գործունեություն ծավալել միայն ոչ աշխատանքային ժամերին: Բացի այդ, հանրային ծառայողներին երբեք չպետք է դրդեն կամ ճնշումների ենթարկեն՝ նախընտրական քարոզարշավին մասնակցելու և/կամ որոշակի ընտրություն կատարելու (քվեարկելու կամ չքվեարկելու որևէ քաղաքական ուժի կամ թեկնածուի օգտին) նպատակով:

Օրենսդրությունը կարող է արգելել կամ սահմանել կարգավորումներ այն նախագծերի հայտարարման վերաբերյալ, որոնք ունեն զգալի բյուջետային հետևանքներ, մասնավորապես՝ խոշոր ենթակառուցվածքային ծրագրերի դեպքում: Նման սահմանափակումներն ուղղված կլինեն քարոզչական նպատակներով դրանց հնարավոր չարաշահումը

[34] Տե՛ս, Handbook for the Observation of Election Campaigns and Political Environments, OSCE Office for Democratic Institutions and Human Rights (ODIHR), 2021.

կանխելուն նախընտրական քարոզչության ընթացքում կամ ընտրությունների նշանակումից հետո:

Օրենսդրությունը պետք է ներառի այնպիսի մեխանիզմներ և իրավական պատասխանատվության միջոցներ, որոնք կնպաստեն նման ընտրախախտումների կանխմանը[35]:

ԵՎ ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵՎ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-Ի 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՀԱՄԱՏԵՂ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Միջազգային դիտորդական կազմակերպությունների կողմից որպես ուղենիշ կիրառվող համատեղ ուղեցույցը[36] վարչական ռեսուրսի չարաշահումը կանխարգելելու նպատակով սահմանում է հետևյալ ***սկզբունքները*** և ***կառուցակարգերը.***

- Օրենսդրությունը պետք է նախատեսի ընտրական գործընթացներում վարչական ռեսուրսի չարաշահման ընդհանուր արգելք: Այդ արգելքը պետք է սահմանված լինի հստակ և կանխատեսելի ձևով: **Վարչական ռեսուրսների չարաշահման համար պետք է նախատեսված լինեն իրավական պատասխանատվության միջոցներ, որոնց կիրառումը պետք է ապահովվի իրավակիրառ պրակտիկայում:**

- Օրենսդրությունը պետք է սահմանի ընտրական ամբողջ գործընթացում հանրային ծառայողների անաչառ գործելու պահանջը՝ իրենց պաշտոնեական պարտականություններն իրականացնելիս: **Այս կարգավորումները պետք է ապահովեն հանրային ծառայության անկողմնակալությունը և արհեստավարժությունը:**

- Օրենսդրական կարգավորումները պետք է ապահովեն հանրային ծառայության չեզոքությունը՝ արգելելով հանրային ծառայողներին մասնակցել նախընտրական քարոզչությանը իրենց պաշտոնեական կարգավիճակում՝ թե՛ որպես թեկնածու, թե՛ այլ թեկնածուի աջակցելու միջոցով: Այս արգելքը պետք է տարածվի նաև պետական և պետության մասնակցությամբ հաստատությունների նկատմամբ: **Կարևոր է, որ ապահովվի հստակ տարանջատում պետության և քաղաքական կուսակցությունների միջև, մասնավորապես, քաղաքական կուսակցությունները չպետք է նույնացվեն պետության հետ:**

[35] Տե՛ս՝ նույն տեղում:

[36] Տե՛ս, Preventing and responding to the misuse of administrative resources during electoral processes, Joint Guidelines by the European Commission for Democracy through Law (Venice Commission) and the OSCE Office for Democratic Institutions and Human Rights.

- Ընտրական գործընթացներում հանրային ծառայության չեզոքությունն ապահովելու և շահերի բախման ռիսկերից խուսափելու նպատակով՝ **օրենսդրությունը պետք է հստակ տարանջատում սահմանի քաղաքականապես զգայուն պետական պաշտոնների, մասնավորապես՝ բարձր ղեկավար պաշտոնների զբաղեցման և առաջադրվելու իրավունքի (թեկնածության) միջև:** Այդ կարգավորումները կարող են հստակ կանոններ սահմանել այն մասին, թե ինչպես և երբ է թույլատրվում անձնական կարգավիճակով քարոզչություն իրականացնել, ինչպես նաև որոշ պաշտոնատար անձանց՝ որպես թեկնածու առաջադրվելու դեպքում պաշտոնավարման ժամանակավոր կասեցման կամ հրաժարական ներկայացնելու պարտավորություն:

- Օրենսդրական կարգավորումները պետք է երաշխավորեն ընտրություններին առնչվող իրադարձությունների օբյեկտիվ, անաչառ և հավասարակշռված լուսաբանումը՝ հանրային լրատվամիջոցների կողմից: **Օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան պետք է ապահովեն, որ հանրային լրատվամիջոցները չներգրավվեն որևէ թեկնածուի կամ քաղաքական ուժի օգտին կամ դեմ «թաքնված» քարոզչության մեջ:**

- Օրենսդրությունը պետք է արդյունավետ մեխանիզմներ սահմանի, որոնցով կարգելվի պետական մարմիններին **օգտագործել իրենց պաշտոնեական դիրքն անհիմն առավելություն ստանալու համար՝** նախընտրական քարոզչության նպատակով պաշտոնական միջոցառումներ կազմակերպելու միջոցով, այդ թվում՝ բարեգործական բնույթի միջոցառումներ կամ այլ միջոցառումներ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն աջակցում կամ վնասում են որևէ քաղաքական կուսակցության կամ թեկնածուի: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել այն միջոցառումներին, որոնք ենթադրում են պետական կամ տեղական բյուջեից հատկացված միջոցների, ինչպես նաև ինստիտուցիոնալ ռեսուրսների՝ անձնակազմի, տրանսպորտային միջոցների, ենթակառուցվածքների, հեռախոսների, համակարգիչների և այլ միջոցների օգտագործում: Սա չի նշանակում, որ պաշտոնատար անձ հանդիսացող թեկնածուները չեն կարող առաջադրվել և քարոզարշավ իրականացնել իրենց աշխատաժամերից դուրս՝ բացառելով վարչական ռեսուրսի օգտագործումը:

- Եթե նախընտրական քարոզչության նպատակով թույլատրվում է հանրային շենքերի և ենթակառուցվածքների օգտագործումը, ապա

օրենսդրությունը պետք է հավասար հնարավորություններ ապահովի և սահմանի հստակ ընթացակարգ՝ նման ռեսուրսները **կուսակցությունների և թեկնածուների միջև արդարացի եղանակով բաշխելու համար:**

- Ընտրությունների ժամանակահատվածում պետք է շարունակվի կառավարության բնականոն աշխատանքը: Այնուամենայնիվ, հավասար մրցակցային դաշտի խաթարմանը հանգեցնող վարչական ռեսուրսի չարաշահումը կանխարգելելու համար օրենսդրությունը պետք է հստակ սահմանի, որ **նախընտրական քարոզչության ընթացքում չպետք է արվեն այնպիսի էական հայտարարություններ, որոնք ուղղակիորեն կապված են կամ նպատակ ունեն որևէ կուսակցության կամ թեկնածուի նկատմամբ բարենպաստ ընկալման ձևավորմանը:** Սա չի վերաբերում այն հայտարարություններին, որոնց անհրաժեշտությունը կապված է անկանխատեսելի հանգամանքների հետ, օրինակ՝ երկրի կամ տարածաշրջանի տնտեսական և/կամ քաղաքական զարգացումների հետ, անհապաղ և անհետաձգելի արձագանք պահանջող բնական աղետներից կամ ցանկացած այլ տեսակի արտակարգ իրավիճակներից հետո:

- Օրենսդրությունը պետք է հստակ սահմանի, որ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում չպետք է կատարվեն նշանակումներ, որոնք էական նշանակություն չունեն կառավարման բնականոն ընթացքի ապահովման համար:

- Անհրաժեշտության դեպքում պետական մարմինները կարող են հանդես գալ հստակ հայտարարություններով և շրջանառել գրավոր շրջաբերականներ առ այն, որ հանրային ծառայողների նկատմամբ որևէ ճնշում չի հանդուրժվելու: **Ոչ մի հանրային ծառայող կամ քաղաքացի չպետք է վախենա իր աշխատանքը կամ սոցիալական ծառայություններից օգտվելու իրավունքը կորցնելուց՝ որևէ քաղաքական կուսակցության կամ թեկնածուի աջակցելու կամ չաջակցելու պատճառով:** Համապատասխանաբար, հանրային ծառայողները պետք է պաշտպանված լինեն ցանկացած տեսակի սպառնալիքից կամ ճնշումից:

Պետք է նկատի ունենալ, որ ըստ Վենետիկի հանձնաժողովի՝ ընտրական գործընթացի ժամանակահատվածն ընդգրկում է դրա տարբեր փուլերը, այդ թվում՝ ընտրական տեղամասերի ձևավորումը, ընտրական հանձնաժողովների կազմավորումը, թեկնածուների

գրանցումը: Հետևաբար, վարչական ռեսուրսի չարաշահման կանխարգելմանն ուղղված վերոգրյալ սկզբունքները գործում են ընտրական գործընթացի ողջ ժամանակահատվածում:

ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ՝ ԸՍՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ

Միջազգային դիտորդական կազմակերպություններն իրենց զեկույցներում անդրադարձել են տարբեր պետություններում ընտրությունների ժամանակ դրսևորվող վարչական ռեսուրսի չարաշահումներին, ընդ որում՝ գնահատականները տրվել են հաճախ ներպետական իրավակարգավորումներից անկախ՝ միջազգային չափանիշների և լավագույն փորձին համապատասխանության տեսանկյունից:

Օրինակ՝

- Միջազգային դիտորդական առաքելության կողմից Ալբանիայի 2025 թվականի խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ հրապարակված ամփոփիչ փաստաթղթում[37] կատարվել է հետևյալ հետևությունը. *«Իշխող կուսակցությունն առավելություններ է ստացել վարչական ռեսուրսների և ինստիտուցիոնալ լծակների լայնածավալ օգտագործման հաշվին, ներառյալ՝ քաղաքացիներին մեծ քանակով տուգանքներից ազատելը, ինչը հայտարարվել է ընտրություններին նախորդող կարճ ժամանակ առաջ: Բացի այդ, բարձրաստիճան պետական պաշտոնատար անձինք մասնակցել են մեծ թվով պաշտոնական միջոցառումների, որոնք հաճախ զուգակցվել են քարոզչական ուղերձներով՝* ***դրանով իսկ խաթարելով պետության և կուսակցության միջև սահմանագիծը»:***
- Սերբիայի 2022 թվականի նախագահական և խորհրդարանական արտահերթ ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի վերջնական զեկույցով արձանագրվել է հետևյալ գնահատականը. *«Նախընտրական քարոզչության ընթացքում պաշտոնավարող նախագահը կամ կառավարության ներկայացուցիչները, որոնք միաժամանակ հանդես էին գալիս որպես թեկնածուներ, հայտարարել, նախաձեռնել կամ պաշտոնապես բացել են մի շարք հանրային ենթակառուցվածքա-*

[37] Տե՛ս, INTERNATIONAL ELECTION OBSERVATION MISSION Albania – Parliamentary Elections, 11 May 2025 STATEMENT OF PRELIMINARY FINDINGS AND CONCLUSIONS, PRELIMINARY CONCLUSIONS, available at: https://www.osce.org/files/f/documents/4/f/590598_4.pdf.

յին նախագծեր: Այսպիսի գործողությունները ***խաթարել են հավասար մրցակցային պայմանները և վտանգել են պետության ու քաղաքական կուսակցության սահմանազատման սկզբունքը»[38]:***

Վարչական ռեսուրսի չարաշահման արձանագրված դեպքերը ներառել են նաև հետևյալ իրավիճակները[39]. ***հանրային միջոցառումների և/կամ ֆինանսական/տեխնիկական ռեսուրսների օգտագործումը քարոզչական նպատակներով հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ իշխող կուսակցությունների կողմից:*** *Նշյալը կարող է դրսևորվել հետևյալ կերպ.*

✓Գույքի սեփականաշնորհման վկայականների հանձնումը, տեղական ենթակառուցվածքային նախագծերի (նախապես) հայտարարումը, որոնք հնարավոր կլինի իրականացնել նախընտրական ժամանակաշրջանում՝ որոշակի թեկնածուին կամ կուսակցությանը ընտրելուն հակելու նպատակով:

✓Պետական բյուջեի որոշ մասերի *(օրինակ՝ մշակութային միջոցառումների համար սահմանված միջոցների)* անհամաչափ ծախսումը նախընտրական քարոզչության փուլում, պետական գույքի օգտագործումը *(օրինակ՝ շտապօգնության մեքենաներ, հանրային տրանսպորտ)* քարոզչական գովազդի տեղադրման համար կամ պետական միջոցների օգտագործումը քարոզչության նպատակներով:

✓Մարդկային ռեսուրսների (հանրային ծառայողների) օգտագործումը, ինչպես նաև՝ պաշտոնեական պարտականությունների և քարոզչության իրականացման զուգակցումը: Այսպես օրինակ՝

- Ուսուցիչների և աշակերտների ներգրավումը նախընտրական միջոցառումներին, քարոզչության իրականացումը աշխատանքային ժամերին, պետական հաստատությունների աշխատակիցների ներգրավումը քարոզարշավին՝ աշխատանքային ժամերին:
- Ծառայողական պարտականությունների իրականացումը (օրինակ՝ սոցիալական աջակցություն տրամադրելու վերաբերյալ դիմում-

[38] Տե՛ս, REPUBLIC OF SERBIA PRESIDENTIAL AND EARLY PARLIAMENTARY ELECTIONS 3 APRIL 2022 ODIHR Election Observation Mission Final Report, available at: https://www.osce.org/files/f/documents/0/0/524385_0.pdf.

[39] Տե՛ս, Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի, ինչպես նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից տարբեր տարիներին հրապարակված դիտորդական զեկույցները, Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (GRECO)-ի գնահատման զեկույցները: Տե՛ս, The misuse of administrative resources during electoral processes: the role of local and regional elected representatives and public officials, 31st SESSION Report CG31(2016)07final, Congress of Local and Regional Authorities.

ների կազմմանը աջակցելը) նախընտրական քարոզչությամբ պայմանավորված արձակուրդում գտնվելու ընթացքում:

- Հանրային ոլորտի աշխատակիցների/հանրային ծառայողների նկատմամբ ճնշում գործադրելու դեպքերը ներառում են աջակցության նամակներ ստորագրելուն կամ որոշակի կուսակցության օգտին քվեարկելուն, քարոզչական միջոցառումներին մասնակցելուն և քվեներ ապահովելուն կամ ընդդիմության նախընտրական միջոցառումներին չմասնակցելուն ուղղված ճնշումները, որոշակի թեկնածուների օգտին չքվեարկելու կամ քարոզչություն չիրականացնելու դեպքերում՝ աշխատանքից ազատման սպառնալիքները կամ ազատման դեպքերը, մարզային ֆինանսավորումը կրճատելու կամ ավելացնելու վերաբերյալ խոստումները և/կամ սպառնալիքները:

- Վարչական ռեսուրսի չարաշահման մեկ այլ օրինակ է ընդդիմադիր կուսակցությունների համար ազատ և հավասար պայմաններով քարոզարշավ իրականացնելու հնարավորության խոչընդոտումը: Նման դեպքերը ներառում են թեկնածուների կամ նրանց աջակիցների նկատմամբ ճնշում գործադրելը, օրինակ՝ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու նպատակով, փոքր ընկերությունների կամ մասնավոր տարածքների սեփականատերերի նկատմամբ ճնշումները՝ ընդդիմադիր թեկնածուներին վարձակալությամբ տարածքներ չտրամադրելու համար, քարոզչության իրականացման համար նախատեսված տարածքների անհավասար բաշխումը, քաղաքական հակառակորդների նկատմամբ ուղղորդված քրեական գործերը, կուսակցությունների կողմից չֆինանսավորվող քարոզչական նյութերի օգտագործումը, ինչպես նաև կեղծ թերթերի տարածումը, որոնք պարունակում են ապատեղեկատվություն կամ զրպարտչական բնույթի տեղեկություններ մրցակիցների վերաբերյալ:

- Լրատվամիջոցների կողմից նախընտրական քարոզչության լուսաբանման համատեքստում, որպես խնդրահարույց իրավիճակներ, արձանագրվել են՝ հանրային/պետական լրատվամիջոցների կողմից գործող պաշտոնատար անձի անհամաչափ լուսաբանումը, հավասար հասանելիության բացակայությունը լրատվամիջոցներին, իշխող կուսակցությունների օգտին կողմնակալությունը և այլն:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀՀ-ՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ



ՀԱՏԿԱՑՎՈՒՄ Է այն կուսակցությանը, որն ԱԺ վերջին ընտրությունների ժամանակ ստացել է ընտրական ցուցակների օգտին կողմ տրված ձայների ընդհանուր թվի և անճըշտությունների թվի գումարի **առնվազն 2%-ը**, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում (2026թ. և հաջորդող տարիների համար)՝ **8%-ը** (մինչև 3 կուսակցություններից կազմված դաշինքի դեպքում), և **10%-ը** (4 և ավելի կուսակցություններից կազմված դաշինքի դեպքում):

ՉԻ ՀԱՏԿԱՑՎՈՒՄ, եթե կուսակցության (այդ թվում՝ դաշինքում ընդգրկված կուսակցության) ակտիվների արժեքը գերազանցում է պետական բյուջեով տվյալ տարում բոլոր կուսակցությունների **պետական ֆինանսավորման համար նախատեսված ընդհանուր գումարի հնգապատիկը:**

Բաղկացած է 2 մասից.

1. Պետական ընդհանուր ֆինանսավորում (80%)

Յուրաքանչյուր տարվա համար պետական ընդհանուր ֆինանսավորումը կուսակցություններին տրամադրվում է կիսամյակային սկզբունքով, բայց ոչ շուտ, քան Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից կուսակցության տարեկան հաշվետվության ստուգումը:

2. Պետական նպատակային ֆինանսավորում (20%)

Պետական նպատակային ֆինանսավորումը յուրաքանչյուր տարվա համար տրամադրվում է միանվագ՝ պայմանավորված երկու չափորոշիչների առկայությամբ՝ (1) տարածքային ներկայացվածությամբ, (2)

կուսակցության ղեկավար մարմնում գենդերային ներկայացվածության տոկոսի:

2.1 Պետական նպատակային ֆինանսավորումն իրականացվում է հետևյալ մասնաբաժիններով:

✓Եթե մշտապես գործող ղեկավար մարմնի կազմում պակաս ներկայացված սեռի ներկայացուցիչների թիվը գերազանցում է 40%-ը, ապա տրամադրվում է պետական նպատակային ֆինանսավորման 1/2 մասը:

✓Եթե թիվը կազմում է 20%-40%՝ մեկ քառորդ մասը, եթե պակաս է 20 %-ից՝ պետական նպատակային ֆինանսավորման 1/2-ը չի տրամադրվում:

✓Եթե ունեցել է տարածքային ստորաբաժանումներ ՀՀ մարզերի առնվազն կեսում, ապա կուսակցությանը տրամադրվում է պետական նպատակային ֆինանսավորման մյուս 1/2 մասը:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ. ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Կուսակցությունն իրավունք ունի ստանալու նվիրատվություն **միայն ֆիզիկական անձից:**

Արգելված է ստանալ նվիրատվություն.

✓Ցանկացած տեսակի իրավաբանական անձանցից (այդ թվում՝ ՊՈԱԿ/ՀՈԱԿ-ներից, պետական կամ համայնքային մասնակցությամբ ընկերություններից, օտարերկրյա իրավաբանական անձանցից և միջազգային կազմակերպություններից)

✓Պետական և համայնքային բյուջեներից և (կամ) արտաբյուջետային միջոցներից (բացառությամբ պետական ֆինանսավորման)

✓Օտարերկրյա պետությունից

✓Անանուն անձանցից

✓ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանցից

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Կուսակցություններին տրամադրվող նվիրտատվության տեսակներն են՝

- Գույք/դրամական միջոցներ (ներառյալ՝ փոխառությունները, երրորդ անձի կողմից կուսակցության պարտքը մարելը, պարտատիրոջ կողմից կուսակցության պարտքը ներելը, ինչպես նաև կուսակցության օգտին կատարվող այլ գործունեություն):
- Կուսակցության օգտին անհատույց աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը:
- Կուսակցությանը սեփականության իրավունքով գույքի փոխանցումը, օգտագործման հանձնումը:
- Նույն կամ համանման ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար գործող շուկայական արժեքից էականորեն ցածր գնով կուսակցության օգտին աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման կամ կուսակցությանը սեփականության իրավունքով գույքի փոխանցման կամ վարձակալության հանձնելու հետևանքով կուսակցության մոտ ձևավորված խնայողությունը (բնեղենով նվիրատվությունը):

Կուսակցության կողմից իր գույքը համանման գույքի համար շուկայական գնից էականորեն բարձր գնով վաճառվելու կամ վարձակալության հանձնվելու դեպքում վաճառքի գնի կամ վարձակալության վճարի՝ շուկայական գինը գերազանցող մասը դիտվում է որպես, կուսակցության օգտին կատարվող, նվիրատվություն:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

(չի ներառում նախընտրական քարոզչության ժամանակահատվածում նախընտրական հիմնադրամներին կատարվող մուծումները)

- Կուսակցությանը տրվող նվիրատվության, ինչպես նաև անդամավճարի և մուտքի վճարի ընդհանուր չափը՝ դրամական արտահայտությամբ, մեկ տարվա ընթացքում չի կարող գերազանցել 1 միլիարդ դրամը, այդ թվում՝ մեկ ֆիզիկական անձի կողմից՝ 10 մլն դրամը:

◆ Ֆիզիկական անձը կարող է 10 մլն դրամի առավելագույն սահմանաչափի շրջանակներում նվիրատվություն կատարել մեկ և ավելի կուսակցության:

◆ Կուսակցությունը նվիրատվություններ, անդամավճարներ, մուտքի վճարներ և պետական ֆինանսավորում ստանալու նպատակով կարող է բանկային հաշիվներ ունենալ միայն ՀՀ տարածքում գործող, Կենտրոնական Բանկի կողմից լիցենզավորված մեկ բանկում, որն ամսական պարբերականությամբ կուսակցությանն է տրամադրում նվիրատվությունների, անդամավճարների և մուտքի վճարների վերաբերյալ տեղեկություններ:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

◆ Ընտրացուցակի գրանցումից հետո նախընտրական հիմնադրամ բացելը պարտադիր է կուսակցությունների համար:

◆ Հիմնադրամ չբացելը հանգեցնում է վարչական պատասխանատվության, իսկ պատասխանատվության միջոցի կիրառումից հետո եռօրյա ժամկետում չբացելը՝ ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչվելուն:

◆ Նախընտրական հիմնադրամից վճարումները կատարվում են անկանխիկ եղանակով:

◆ Կուսակցության/դաշինքի նախընտրական հիմնադրամի միջոցները ձևավորվում են այդ կուսակցության (դաշինքի անդամ կուսակցությունների) կատարած մուծումներից:

ՀԻՄՆԱԴՐԱՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՄՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓ

(Աժ ընտրություններ)

◆ Ընտրությանը մասնակցող կուսակցություն (դաշինքում ընդգրկված կուսակցությունները միասին)՝ մինչև **800 մլն դրամ:**

◆ Հիմնադրամ կատարվող այլ մուծումներ չեն թույլատրվում:

◆ Արդեն իսկ ստացված, բայց արգելված գումարները փոխանցվում են համապատասխան մուծումը կատարած անձին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ պետական բյուջե: Անանուն մուծումները փոխանց-

վում են պետական բյուջե: Թույլատրված չափի գերազանցման դեպքում՝ գերազանցող մասը փոխանցվում է մուծումը կատարած անձին, իսկ եթե անհնար է՝ պետական բյուջե: Թեև օրենսդրությամբ այս գումարների փոխանցման հստակ ժամկետ նախատեսված չէ, փոխանցումները պետք է կատարվեն հնարավորինս սեղմ ժամկետում՝ առավելագույնը 3 օրվա ընթացքում:

◆ Այն բանկերը, որտեղ բացված են ժամանակավոր հատուկ հաշիվներ, կուսակցությունների/դաշինքների ընտրական ցուցակների գրանցման ժամկետի ավարտից 5 օր հետո՝ 3 աշխատանքային օրը մեկ վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն տեղեկանք են ներկայացնում նրանց նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ: ԿԸՀ վերստուգիչ-վերահսկիչ ծառայությունը կազմում է ամփոփ տեղեկանք, որը տեղադրվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում:

◆ Կուսակցությունների/դաշինքների ընտրական ցուցակների գրանցման ժամկետի ավարտից հետո բանկերը 3 աշխատանքային օրը մեկ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (ԿԿՀ) են ներկայացնում ընտրություններին մասնակցող կուսակցությունների (դաշինքում ընդգրկված կուսակցությունների) բանկային հաշիվների ֆինանսական միջոցների մնացորդի, մուտքերի և ելքերի վերաբերյալ տվյալներ: ԿԿՀ-ն կազմում է ամփոփ տեղեկանք, որը տեղադրվում է ԿԿՀ-ի կայքում:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ԾԱԽՍԵՐ

Նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին՝ նախընտրական քարոզչության նախապատրաստման, կազմակերպման, իրականացման հետ կապված ծախսեր, մասնավորապես՝

- ԶԼՄ-ներով նախընտրական քարոզչության իրականացման ծախսեր
- համացանցով նախընտրական քարոզչության իրականացման ծախսեր
- նախընտրական քարոզչության ընթացքում սոցիոլոգիական հարցումների և հետազոտությունների իրականացման ծախսեր
- նախընտրական ժողովներ, ընտրողների հետ հանդիպումներ և նախընտրական քարոզչության հետ կապված այլ միջոցառումներ

անցկացնելու նպատակով դահլիճների, տարածքների վարձակալման ծախսեր

- ընտրական շտաբների տեղակայման նպատակով տարածքների վարձակալման ծախսեր

- քարոզչական պաստառների, քարոզչական տպագիր և այլ նյութերի պատրաստման (տեղադրման), ձեռքբերման, փակցման, ընտրողներին տրամադրվող քարոզչական նյութերի պատրաստման ու տարածման հետ կապված ծախսեր

- նախընտրական քարոզչության նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոցների վարձակալության հետ կապված ծախսեր (բացառությամբ մինչև 7 նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների)

- նախընտրական քարոզչության իրականացման նպատակով կազմակերպված մշակութային կամ մարզական միջոցառումների անցկացման հետ կապված ծախսեր

- վստահված անձանց տրվող փոխհատուցման ծախսեր:

Նշված ապրանքներն ու ծառայությունները, եթե մատուցվել են անհատույց կամ շուկայական արժեքից պակաս գնով կամ ձեռք են բերվել մինչև նախընտրական հիմնադրամի ձևավորումը, իրենց շուկայական արժեքով ներառվում են նախընտրական հիմնադրամի ծախսերում:

Կուսակցության/դաշինքի կամ թեկնածուի կողմից համերգների, ներկայացումների, մարզական միջոցառումների, ֆիլմերի ցուցադրության և այլ միջոցառումների ֆինանսավորումը կարող է իրականացվել միայն նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին:

Նախընտրական հիմնադրամում չներառվող հնարավոր ծախսեր են.

✓Նախընտրական ժողովներ, ընտրողների հետ հանդիպումներ և նախընտրական քարոզչության հետ կապված այլ միջոցառումներ անցկացնելու նպատակով դահլիճների, տարածքների և ընտրական շտաբների կոմունալ ծախսերը:

✓Նախընտրական քարոզչության նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոցների վառելիքի հետ կապված ծախսերը:

Ծախսերի առավելագույն սահմանաչափ՝ 800 մլն դրամ (ԱԺ ընտրություններ):

ՀԻՄՆԱԴՐԱՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՄՈՒՃՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓ

(ՏԻՄ ընտրություններ)

Ընտրությանը մասնակցող կուսակցություն (դաշինքում ընդգրկված կուսակցությունները համատեղ)՝ Երևան՝ մինչև 300 մլն դրամ, 25000 և ավել բնակչությամբ համայնք՝ մինչև 60 մլն դրամ, մինչև 25000 բնակչությամբ համայնք՝ մինչև 40 մլն դրամ:

ՏԻՄ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԾԱԽՍ

(ՏԻՄ ընտրություններ)

Երևան՝ առավելագույնը 300 մլն դրամ, 25000 և ավել բնակչությամբ համայնք՝ առավելագույնը 60 մլն դրամ, մինչև 25000 բնակչությամբ համայնք՝ առավելագույնը 40 մլն դրամ:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կուսակցությունները պարտավոր են.

✓ԿԿՀ ներկայացնել ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև՝ գույքի մասին տարեկան հաշվետվություն (մինչև հաջորդող տարվա փետրվարի 20-ը):

✓ԿԿՀ ներկայացնել հաշվետվության ստուգման համար անհրաժեշտ տեղեկություններ, փաստաթղթեր (ներառյալ գաղտնիք պարունակողները):

✓Տարեկան հաշվետվությունը սահմանված կարգով ԿԿՀ-ի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո՝ ապահովել հաշվետվության (ԿԿՀ-ի հրապարակած տարբերակի) հրապարակումը կուսակցության պաշտոնական կայքէջում (առկայության դեպքում):

✓ԿԿՀ ներկայացնել տեղեկություններ իրենց բանկային հաշիվների մասին (այս տեղեկություններն առաջին անգամ ԿԿՀ պետք է ներկայացվեն 2025թ.-ի հաշվետվության շրջանակներում):

✓Ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 10 օրվա ընթացքում ԿԸՀ ներկայացնել կուսակ-

ցության (կուսակցությունների դաշինքները՝ դրանցում ընդգրկված կուսակցությունների) գույքի և եկամուտների մասին հայտարարագիր:

✓Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնել իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրեր:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

◆ Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում՝ այդ մարմնի անդամները, պարտավոր են ԿԿՀ ներկայացնել պաշտոնը ստանձնելու, դադարեցնելու և գույքի և եկամուտների տարեկան հայտարարագրեր:

◆ Կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամներն ազատված են հայտարարագիր ներկայացնելու պարտականությունից:

◆ Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամներն ազատվում են հայտարարագիր ներկայացնելու պարտականությունից, եթե «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հանդիսանում են հայտարարատու պաշտոնատար անձինք:

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կուսակցությունը ենթակա է պարտադիր աուդիտի, եթե.

✓Հաշվետու տարվա ընթացքում սահմանված մուտքերը կամ ելքերը գերազանցել են 25 մլն դրամը,

✓Կուսակցությունը պետական բյուջեից ստացել է պետական ֆինանսավորում:

ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Քրեական պատասխանատվություն նախատեսված է հետևյալ դեպքերի համար.

- ԱԺ ընտրությունների ժամանակ սահմանված նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից խոշոր (10 միլիոն դրամը գերազանցող գումար) չափով չկատարելը կամ հայտարարագրման ենթակա տվյալները չհայտարարագրելը (10 միլիոն դրամը գերազանցող չափով) կամ համապատասխան հայտարարագիրը չներկայացնելը:
- Կուսակցության օգտին նվիրատվություն կատարելուն հարկադրելը:
- Կուսակցության անդամի կողմից կուսակցության օգտին օրենքով չթույլատրված աղբյուրից խոշոր չափերով կամ օրենքով սահմանված առավելագույն չափը խոշոր չափերով գերազանցող նվիրատվություն ներգրավելը (խոշոր չափ է համարվում 1 միլիոն դրամը գերազանցող գումարին համարժեք նվիրատվությունը):
- Անձի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված չափը չգերազանցելու արգելքը կամ օրենքով չթույլատրված աղբյուրներից նվիրատվությունների արգելքն այլ անձի անունից նվիրատվություն ձևակերպելու եղանակով շրջանցելը (1 միլիոն դրամը գերազանցող չափով):
- Իրավաբանական անձի անունից կուսակցությանը խոշոր չափով (1 միլիոն դրամը գերազանցող չափով) նվիրատվություն կատարելը:
- Նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված առավելագույն չափը խոշոր չափերով (1 միլիոն դրամը գերազանցող չափով) գերազանցելը:

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Վարչական պատասխանատվություն նախատեսված է հետևյալ դեպքերի համար.

- Կուսակցության/դաշինքի կողմից նախընտրական հիմնադրամ չբացելը, նախընտրական հիմնադրամ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը չներկայացնելը,

խախտմամբ լրացնելը կամ ներկայացնելը կամ նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից չկատարելը:

- Կուսակցության (դաշինքում ընդգրկված կուսակցության) գույքի և եկամուտների մասին հայտարարագիրն օրենքով սահմանված ժամկետում Կենտրոնական ընտրական հանձնաժողով (ԿԸՀ) չներկայացնելը:
- Կուսակցության ղեկավար մարմնի պաշտոնատար անձանց հայտարարագրերը ԿԿՀ սահմանված ժամկետներում չներկայացնելը կամ ներկայացվող պահանջների կամ կարգի խախտմամբ ներկայացնելը կամ հայտարարագրերում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը:
- Հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվություն չներկայացնելը կամ դա չհրապարակելը:
- Հաշվետվության հավաստիությունը ստուգելու համար պահանջված փաստաթղթերը սահմանված ժամկետում չտրամադրելը:
- Կուսակցությանն օրենքով սահմանված նվիրատվությունները կամ կուսակցության կողմից դրամական վճարումների հաշվարկները անկանխիկ չկատարելը:
- Կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվությունները սահմանված ժամկետում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելը:
- Կուսակցության անդամի կողմից կուսակցության օգտին ապօրինի նվիրատվություն ներգրավելը:
- Նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցելը:
- Իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելը:
- Կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված առավելագույն չափը չգերազանցելու արգելքը կամ օրենքով չթույլատրված աղբյուրներից նվիրատվությունների արգելքը շրջանցելը:
- Բանկի կամ վարկային կազմակերպության կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելը:
- Կուսակցության կողմից հայտարարատու պաշտոնատար անձին պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու մասին ԿԿՀ-ին չծանուցելը:

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Շվեդիա
Sverige

UK International Development
Partnership | Progress | Prosperity

Ընտրական Համակարգերի
Միջազգային Հաստատություն